

1875—1890

Ա ՀԱ ասոնց վրայ է՝ որ միւս դրամատէր ու գործա-
գէտ կեսարացի Հայեր ալ կրակսին նետուիլ Կ. Պո-
լիսի մանիֆաթուրայի հրապարակը. Կիւմիւշեանք, Գը-
նաճեանք ու Կիւլպէնկեանք, (որ ցայնվայր գլխաւորա-
պէս Ձմիւռնայի մէջ կը գործէին), կը հաստատեն Կ.
Պոլիսի մէջ ալ վաճառատուն մը ուրիշ ճիւղերու, մանա-
ւանդ offa մալիի վրայ:

Տասնևիններորդ դարու հայ կեսարացւոց մանիֆա-
թուրայի պոլսական վաճառականութեան սկիզբն ահա
այսպէս կը պատմուի՝ յառաջընթացն ըլլալով յաւէտ Սե-
նեքերիմ Մանուկեան. այս պարագան է գլխաւորապէս
պատճառ՝ որ քիչ մը երկարեցինք իր վրայ: Ս. Մանու-
կեան անձամբ կը տեսէ իր գործին մէջ մինչև 1880, որ-
մէ ետք իր եղբարքն ու եղբօրորդիք կը շարունակեն
այդ սկսեալ գործն այլ և այլ ճիւղերու բաժնուած՝
Մկրտիչ, Տիգրան, Սեդրակ, Բարսեղ, Մինհան ու Ար-
մենակ Մանուկեան (սովորաբար Մանիկեան կամ Մանիկ-
օղլու ալ արտասանուած):

Քափամաճեանք՝ գլխաւորապէս ընտիր գործագէտ-
ներու չգոյութեան և իրենց քէյմլի ծանրադանդաղու-
թեան պատճառով՝ հետզհետէ տեղի կուտան այս նոր
փորձադէտներուն և Աճէմ օղլույի ու Գարակէօզեանց: